ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ
ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԵՎ
ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ և ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻՆ ԿԻՑ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

1) **Նիստի անցկացման վայրը, տարին, ամիսը և ամսաթիվը, նիստը սկսելու և ավարտելու ժամերը՝**

   ՀՀ ՏԿԵՆ նիստերի դահլիճ (հասցե՝ ք. Կառավարական տուն 3), 2026թ. փետրվարի 24-ին՝ ժամը 14^{30}-16^{00}:

2) **Նիստի օրակարգը՝**

   Կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով ընթացիկ տարվա համար նախարարության կողմից իրականացման ենթակա միջոցառումների մասին: (Զեկուցող՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության գլխավոր քարտուղար՝ Արթուր Երիցյան):

3) **Նիստին մասնակցող խորհրդի անդամների, հրավիրված անձանց տվյալները՝**

   Նախարարին կից Խորհրդի 21 անդամներից նիստին մասնակցել են 21-ը՝

   1. **Խորհրդի նախագահ՝** ՏԿԵ նախարար Դավիթ Խուդաթյանը
   2. **«Քաղաքացիական երիտասարդական կենտրոն»** համայնքային զարգացման հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Արփինե Երիցյանը
   3. **«Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիություն» ՃՀՄ**, կազմակերպության ներկայացուցիչ՝ Անահիտ Ասատրյանը
   4. **«ՄԵՆՔ» Լոռու մարզի երիտասարդական** հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Արամ Գևորգյանը
   5. **«Հայաստանի հանքարդյունաբերության և մետալուրգիայի ասոցիացիա»** հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Վարդան Ջհանյանը
   6. **«Մարտունու կանանց համայնքային խորհուրդ»** հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Անահիտ Գևորգյանը

7. **Տեխնիկական համագործակցության և զարգացման գործակալության (Acted) Հայաստանյան մ/ճ առանձնացված ստորաբաժանում** ոչ առևտրային կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Մագդալինա Խոյեցյանը
8. **«Երիտասարդական ավանգարդ»** հանրային շահերի աջակցման հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Սուսաննա Մատինյանը
9. **«ՀԿ Կենտրոն»** քաղաքացիական հասարակության զարգացման հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Արփինե Հակոբյանը
10. **«Համայնքային համախմբման և աջակցության կենտրոն»** համայնքային հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Օլեգ Դուլգարյանը
11. «**Իրավաբանների հայկական ասոցիացիա»** հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Մարիաննա Ավագյանը
12. **«Արմավիրի զարգացման կենտրոն»** սոցիալ-տնտեսական հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Նաիրա Առաքելյանը
13. **««Տաշիր Պլյուս» տեղական ակտիվ խումբ տարածքային զարգացման»** հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Հայարփի Կիրակոսյանը
14. **«ԷկոԼուր»** տեղեկատվական, հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Վիկտորյա Բուռնազյանը
15. **«Էկոպոլիս բնապահպանական կենտրոն»** համայնքային զարգացման և անվտանգության համար հասարակական կազմակերպություն, կազմակերպության ներկայացուցիչ՝ Ալբերտ Հարոյանը
16. **Էներգախնայողության աջակցման հիմնադրամ,** կազմակերպության ներկայացուցիչ՝ Աստղինե Պասոյանը
17. **«Հայաստանի մանուկներ» բարեգործական հիմնադրամ (COAF/ՔՈԱՖ), ,** կազմակերպության ներկայացուցիչ՝ Ծովինար Սողոմոնյանը
18. **Հայաստանի գործատուների հանրապետական միություն,** կազմակերպության ներկայացուցիչ՝ Արմեն Ստեփանյանը
19. **Արման Ավետյանը՝** Քաղաքային տնտեսության և տարածքային կառավարման փորձագետ, Հայ-ռուսական համալսարանի Կառավարման և բիզնեսի ամբիոնի դոցենտ, տ.գ.թ
20. **Գոհար Սահակյանը՝** «Aparan Youth Alliance» նախաձեռնության հիմնադիր, երիտասարդական աշխատող
21. **Ստեփան Խաչատրյանը՝** Ջրային և տարածական տվյալների փորձագետ

Հրավիրված անձինք՝

1. ՀՀ ՏԿԵՆ Գլխավոր քարտուղար՝ **Արթուր Երիցյան**
2. ՀՀ ՏԿԵ նախարարի օգնական, Խորհրդի համակարգող պաշտոնատար անձ՝ **Լիանա Հովհաննիսյան**
3. ՀՀ ՏԿԵՆ Հասարակայնության հետ կապերի բաժնի ավագ մասնագետ, Խորհրդի պատասխանատու պաշտոնատար անձ՝ **Նարինե Անտոնյան**
4. ՀՀ ՏԿԵՆ Տեղական ինքնակառավարման քաղաքականության վարչությունում որպես խորհրդական՝ առանձին գործառույթներ համակարգող՝ **Վահրամ Հովհաննիսյան**
5. ՀՀ ՏԿԵՆ Փաստաթղթաշրջանառության բաժնի գլխավոր մասնագետ, արձանագրող՝ **Ստելլա Սիմոնյան**

4) Քննարկվող հարցերի և ելույթների հիմնական դրույթները.

Գումարվել է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարին կից նոր ձևավորված հասարակական խորհրդի առաջին նիստը, որը վարել է Խորհրդի նախագահ /այսուհետ՝ Նախարար/ **Դավիթ Խուդաթյանը**:

Բացման խոսքում Նախարարը նշեց, որ նախարարության նպատակն է ստեղծել բազմաոլորտ խորհուրդ, որը կապահովի մարզային/համայնքային ներգրավվածություն, նաև նախարարության համակարգման տարբեր ոլորտներին առնչվող մարզային ենթակառուցվածքների զարգացման հարցում փոխգործակցություն:

Նախարարը նաև անդրադարձավ նախարարության ենթակայության համակարգման բոլոր ոլորտների, մասնավորապես՝ ջրային, տրանսպորտային, երկաթուղային, էներգետիկ, քաղավիացիոն, տարածքային կառավարման, ընդերքի, պետական գույքի կառավարման կոմիտեի մասով նախարարության գործառույթներին, ինչպես նաև պետական համաֆինանսավորմամբ իրականացվող ծրագրերին: Նաև հավելեց, որ Կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով 2025-2026թթ. նախարարությունն իրականացրել է 246 միջոցառում, 86-ը՝ 2026թ. համաչափ զարգացման մասով:

Զեկուցմամբ հանդես եկավ ՏԿԵՆ գլխավոր քարտուղար **Արթուր Երիցյանը,** ով զեկուցեց, որ Կառավարության գործունեության հնգամյա միջոցառումների ծրագրով 2021-2026թթ.-ին ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարությանը վերապահված են 107 նպատակներ և 241 միջոցառումներ, որոնցից՝ 86-ը նախատեսվում է իրականացնել 2026 թվականին՝ համաչափ

զարգացման մասով: Ծրագրի միջոցառումներն ըստ ոլորտների հետևյալն են՝ տարածքային համաչափ զարգացման ոլորտ՝ 2 միջոցառում, ՀՀ համայնքների տնտեսական և սոցիալական ենթակառուցվածքների զարգացման ոլորտ՝ 3 միջոցառում, վարչատարածքային բարեփոխումների ոլորտ՝ 2 միջոցառում, էներգետիկայի ոլորտ՝ 16 միջոցառում, ճանապարհաշինության ոլորտ՝ 19 միջոցառում, երկաթուղային տրանսպորտ՝ 1 միջոցառում, քաղաքացիական ավիացիայի ոլորտ՝ 8 միջոցառում, ջրային ոլորտ՝ 34 միջոցառում, ընդերքի ոլորտ՝ 1 միջոցառում: Առանձին ոլորտային միջոցառումների մասին տեղեկատվությունը խորհրդի անդամներն նախապես տրամադրվել է և եթե կան հավելյալ մանրամասնելու, քննարկելու հարցերի միջոցով կարող են անել: Զեկուցողը խոսքը եզրափակելով նշեց, որ կարող են առանձին, ըստ ոլորտների, աշխատանքային խմբեր կազմել և ոլորտային պատասխանատու ստորաբաժանումների հետ հարցերը քննարկել:

5) **Նիստին մասնակցող Խորհրդի անդամների ներկայացրած հանրային առաջարկները, դիտողությունները և դրանց վերաբերյալ պաշտոնական մեկնաբանությունները.**

- ***Էներգախնայողության աջակցման հիմնադրամ*** *կազմակերպության ներկայացուցիչ* ***Ասպղինե Պասոյանն*** *իր մտահոգությունը հայտնեց այն մասով, որ Նախարարության 2026-2031թթ. գործողությունների ծրագրում արտացոլված չեն «էներգաարդյունավետություն» ու «էներգախնայողություն» եզրույթները, և հարցրեց՝ արդյոք էներգետիկայի վարչությունը 2026թ. գործառույթներ ունի իրականացնելու Հայաստանի և Եվրամիության միջև կնքված Համապարփակ և ընդլայնված գործընկերության համաձայնագրի (ՀԸԳՀ, (CEPA)) մասով:*

  Նախարար Դավիթ Խուդաթյանն ի պատասխան նշեց, որ ՀԸԳՀ-ի մասով նախարարությունն ունի պարտավորություններ, այդ ոլորտում կան կատարված աշխատանքներ: Նաև հավելեց, որ Բնակարանների և անհատական բնակելի տների էներգաարդյունավետ վերանորոգման աշխատանքների պետական աջակցության (ռենովացիա) ծրագիրը 2025թ. հուլիսին դադարեցվել է, այն ենթարկվելու է որոշակի փոփոխությունների:
  Նախարարը հավելեց, որ Կառավարության էներգախնայողության ծրագրով 2025թ. 8 մլրդ դրամով սուբսիդավորվել են 50.500 քաղաքացու, տնտեսությունների էներգախնայողության վարկերը՝ շահառուներին զրո տոկոսադրույք տրամադրելով, ինչի արդյունքում արդեն առկա են 1100 ՄՎտ հզորությամբ արևային կայաններ: Սակայն դրանց ստեղծման աճի շարունակականությունը դադարեցվել է: Միայն կուտակիչ կայանների մասով օրենսդրական փոփոխությունների դեպքում հնարավոր կլինի վերագործարկել ռենովացիայի ծրագիրը:

Դ.Խուդաթյանը կարևորեց նաև նոր ատոմակայանի կառուցման հարցը: Նրա խոսքով ՀՀ-ն որոշել է նոր ատոմակայանի կառուցում իրականացնել, ինչի նպատակով 2025թ. հիմնվել է փակ բաժնետիրական ընկերություն, որն աշխատելու է նախարարության համակարգմամբ: Այն խորհրդատվություն է տրամադրելու հավանական նոր մոդելի ընտրության, տեխնիկական հաշվարկի, կառուցման, հսկողության մասով:
Ըստ նախարարի՝ մոդուլային ատոմակայան կառուցելը կապված է վերականգնվող էներգետիկայի ուղղության հետ: Պետք է ճկունություն հաղորդել ՀՀ էներգահամակարգին: Ունենք 1100 ՄՎտ հզորությամբ արևային կայաններ, որոնք սեզոնային էլէներգիա են արտադրում, դրանք աշխատում են իրենց ներուժի փոքր մասով, Մեծամորի ատոմակայանն իր արտադրողականությամբ ամենաբարձրն է, շատ հաճախ էներգետիկ հզորությունները ցերեկվա ժամին ավել են աշխատում, կամ աշխատում են իրենց ներուժի փոքր մասով, կան կայաններ, որ աշխատում են իրենց ներուժի 60 կամ 70 տոկոսով, մոդուլային ատոմակայանների արտադրողականությունը կարող է իջեցվել:
Ունենք 5 երկրից մոդուլային ատոմակայանի մի քանի առաջարկ՝ ՌԴ-ից, ԱՄՆ-ից, Չինաստանից, Հարավային Կորեայից, Ֆրանսիայից:
Նախարարը հավելեց, որ 2026թ.-ին պետք է դադարեցվի Մեծամորի ատոմակայանի գործունեությունը, այս անգամ առավել երկար ժամանակով՝ պայմանավորված ատոմակայանի գործունեության ժամկետի երկարաձգմամբ: Նման բլոկով, ռեակտորով ատոմակայանները կարող են գործունեություն ծավալել 70 տարի, իսկ Մեծամորի ատոմակայանը ընդհանուր առմամբ աշխատել է 46 տարի և հնարավորություն ունի ևս 20 տարի շահագործվելու:

- ***«Էկոպոլիս բնապահպանական կենտրոն»*** *համայնքային զարգացման և անվտանգության համար հասարակական կազմակերպության ներկայացուցիչ* ***Ալբերտ Հարոյանն*** *անդրադարձավ Դիլիջան համայնքի և հարակից տարածքների զարգացման և ներդրումների խրախուսման մասին օրենքի կիրառման հետ կապված խնդիրներին (թեպետ նրա խոսքով օրենքն ունի դրական կողմեր՝ հանքարդյունաբերության արգելքներ, շրջակա միջավայրի պահպանություն բնության հատուկ պահպանվող տարածքներում): Ըստ իրականացված մշտադիտարկման՝ օրենքում կան խոչընդոտներ ժողովրդավարության և մասնակցային առումով. քաղհասարակությունն իրավունք չունի Դիլիջանի քաղաքաշինական և ներդրումների խրախուսման խորհրդի կազմում ներգրավվելու: Օրենքը նաև չի նպաստում գյուղատնտեսության, մասնավորապես՝ անասնաբուծության զարգացմանը:*

ՏԿԵ նախարարի տեղեկացմամբ բացի Երևան քաղաքից՝ Հայաստանում այլ համայնքներ չկան, որոնք չեն կառավարվում Տեղական ինքնակառավարման մասին օրենքով: Այս մասով օրենքը բաց ունի, օրենսդրական փոփոխությունների անհրաժեշտություն կա: Հարցը քննարկվել է ԱԺ գործընկերների, Տավուշի մարզպետի աշխատակազմի և Դիլիջան համայնքի ղեկավարի հետ, ներկայացվել է առաջարկվող փոփոխությունների փաթեթը: Խնդրի լուծումն ընթացքի մեջ է:

- ***«ԷկոԼուր»*** *տեղեկատվական, հասարակական կազմակերպության ներկայացուցիչ* ***Վիկտորյա Բուռնազյանը*** *հանդես եկավ նոր աղբավայրի մասին հարցով: Նա նշեց, որ շահագործման է հանձնվել Հրազդանի սանիտարական աղբավայրը, ինչը ենթադրում է, որ Գեղարքունիքի և Կոտայքի մի շարք համայնքներում աղբավայրերը պիտի փակվեն, և եթե փակվեն, ապա ինչ ֆինանսական և տեխնիկական միջոցներով:*

  Հարցին ի պատասխան նախարարը նշեց, որ աղբավայրը շահագործվել է 2025թ. ամռանը: 2026թ.-ից Գեղարքունիքի և Կոտայքի մարզերի բոլոր համայնքները պետք է շահագործեն այս աղբավայրը, որից հետո կսկսվի տեղական աղբավայրերի փակման գործընթացը, ինչը հիմնականում կիրականացվի դրամաշնորհային միջոցներով, ինչպես նաև պետություն-համայնք համաֆինանսավորմամբ: Դավիթ Խուդաթյանի խոսքով Նախարարությունը տեխնիկատնտեսական ուսումնասիրություններ է պատվիրել ընկերությունների, որոնք խորհրդատվական ծառայություններ կմատուցեն մայրաքաղաք Երևանում, ինչպես նաև 3 այլ վայրերում միասնական աղբավայրեր ունենալու ուղղությամբ:

- ***«ՀԿ Կենտրոն»*** *հասարակական կազմակերպության ներկայացուցիչ* ***Արփինե Հակոբյանի*** *խոսքով Եվրամիությունը ծրագիր է իրականացրել Վանաձորում և Գյումրիում, որով պետք է հոսքագծեր տեղադրվեն, պարզվեց, որ աղբի քանակը քիչ է, անհրաժեշտ է համակարգել: Պետք է համայնքներից հավաքագրել աղբը:*

  Նախարարի խոսքով Հայաստանում աղբի տեսակավորման գործընթացն այնպես չի ընթանում, ինչպես որ պետք է, չեն համընկնում բնակչության թվի և աղբի որոշակի ծավալի մասին պատկերացումները, ՀՀ-ում գունավոր մետաղները շրջանառությունից դուրս չեն գալիս, ապակին, մետաղները, տեխնիկան ՀՀ-ում աղբ չեն դառնում, դրանք ենթակա են երկրորդային օգտագործման: Խնդիրն այն է, որ ձևավորված աղբի ճնշող մեծամասնությունը շինարարական աղբն է, որով ոչինչ անել հնարավոր չէ:

- ***«Երիտասարդական ավանգարդ»*** *հանրային շահերի աջակցման հասարակական կազմակերպության ներկայացուցիչ* ***Սուսաննա Մատինյանը*** *սոցիալական արդարության և համաչափ զարգացման համատեքստում /Երևան քաղաքի մանկապարտեզների օրինակով/ կարևորեց համայնքներում նախադպրոցական հաստատություններում անվճար կրթություն ստանալը, նրա հարցը վերաբերում էր այդ մասով նախարարության քաղաքականությանը:*

  Նախարարի ընդգծմամբ Հայաստանում հաջողությամբ իրականացվում է «500 մանկապարտեզի» կառուցման ծրագիրը, որում պետությունը էական մասնակցություն ունի: Այն մանկապարտեզները, որոնք կառուցվում են Քաղաքաշինության կոմիտեի կամ ՀՏՋՀ-ի պատվերով, դրանք ամբողջովին կառուցվում են պետական միջոցներով, իսկ այն մանկապարտեզները, որոնք կառուցվում, վերակառուցվում, հիմնանորոգվում կամ նորոգվում են պետական

համաֆինանսավորման շրջանակներում, մինչև 2025թ. 70 տոկոսը համաֆինանսավորվել են պետության կողմից /սահմանամերձ և բարձրլեռնային բնակավայրերում համաֆինանսավորումն իրականացվել է մինչև 80 տոկոսով/: 2026թ.-ին պետությունը 60 տոկոս է համաֆինանսավորելու՝ պայմանավորված հայտերի աննախադեպ աճով:

Դավիթ Խուդաթյանն ընդգծեց, որ մանկապարտեզների վարձավճարները տեղական ինքնակառավարման մարմինների գործառույթն է: Պետությունից համայնքներին տրվող դոտացիաների ծախսի ուղղությունները պետք է որոշեն համայնքները, նախարարությունը շատ հաճախ հաշվի է առնում ոլորտային գործընկերների կարծիքները: 2025թ.-ին համաֆինանսավորմամբ աննախադեպ՝ 61 մլրդ դրամի աշխատանքներ են իրականացվել, որից 33.5 մլրդ դրամը հատկացվել է պետական բյուջեից: Ըստ նրա՝ պետք է գործի ճկուն զեղչային համակարգ տեղահանված ընտանիքների երեխաների, ծնողազուրկ, 1 ընտանիքից 2 և ավելի երեխաներ ունեցողների համար: Համայնքի ղեկավարները ևս պետք է ցուցաբերեն ճկունություն և ըստ կարիքի օգտագործեն համայնքին տրված դոտացիաները:

- ***«Քաղաքացիական երիտասարդական կենտրոն»*** *համայնքային զարգացման հասարակական կազմակերպության ներկայացուցիչ* ***Արփինե Երիցյանն*** *էլ խոսեց սահմանամերձ բնակավայրերում ապաստարանների, թաքստոցների կառուցման կամ վերակառուցման հարցի կարևորության մասին և նշեց, որ դա օրակարգային հարց է: Նա հավելեց, որ համայնքները սեփական միջոցներով չեն կարողանում իրականացնել այդ աշխատանքները: ՀՀ համայնքների միջև անհավասար զարգացումը մեղմելու, համայնքներն իրար մոտեցնելու մասով սուբվենցիոն ծրագրերն էական դեր են խաղում:*

Ա.Երիցյանի հարցին՝ արդյոք նախարարությունը վերը նշված հարցը քննարկում է կամ կան անելիքներ այդ ուղղությամբ, ՏԿԵ նախարարը նշեց, որ սուբվենցիոն հայտերը պետք է բխեն հանրային պահանջից, ներկայացվեն հանրային քննարկման, ձևավորվեն հանրային լսումների հիման վրա: Այժմ առկա չեն ապաստարանների կառուցման մասով սուբվենցիոն ծրագրերով հայտեր: Պետք է ձևավորվի հարցի համապատասխան պահանջարկ, առաջնային կարիքների շարքում լինի, հետո միայն ընդգրկվի սուբվենցիոն հայտերում:
Նախարարը նաև հավելեց, որ Քաղաքաշինության կոմիտեի նախագծերի զգալի մասը ապաստարաններ պարունակող մանկապարտեզներ են:

Ըստ Դ.Խուդաթյանի՝ Նախարարության 2026թ. առաջնահերթություններից շարունակում է մնալ ճանապարհաշինությունը, նաև ըստ անհրաժեշտության մանկապարտեզների կառուցումն ու վերակառուցումը, բայց ամենակարևորը ջրային ոլորտի ենթակառուցվածքների զարգացումն է՝ ոռոգման ջուր, խմելու ջուր, ջրահեռացման համակարգեր, ջրամբարներ, մաքրման կայաններ:

6) Ընդունված որոշումները.

Խորհրդի նախագահ նախարար Դավիթ Խուդաթյանը նշեց, որ հաշվի են առնվում խորհրդի անդամների առաջարկները և մտահոգությունները: Որոշվեց ըստ անհրաժեշտության ստեղծել առանձին փոքր աշխատանքային խմբեր, հուզող հարցերի շրջանակը քննարկել և աշխատել նախարարության համապատասխան ստորաբաժանումների աշխատակիցների հետ և հարցի կարևորությունից ելնելով՝ այն ընդգրկել հաջորդ նիստերում՝ ընդլայնված կազմով քննարկելու համար:

Խորհրդի նախագահ՝

ՀՀ տարածքային կառավարման և
ենթակառուցվածքների
նախարար Դավիթ Խուդաթյան